***Կարգապահական գործ թիվ ԿԳ-14107***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի ապրիլի 20-ի թիվ 89-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/64-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ՄԿՐՏԻՉ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**), նախագահությամբ Խորհրդի անդամ՝ Կարապետ Աղաջանյանի, մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայնի, Տիգրան Խուրշուդյանի, Երվանդ Վարոսյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Նելլի Հարությունյանի, Ալեքսանդր Սիրունյանի կազմով,

քարտուղարությամբ Նոնա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մկրտիչ Դավթյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր № 1186) (այսուհետ նաև՝ **Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Հակոբ Մելիքյանը 29.07.2014թ-ին դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին, որով ըստ էության հայտնել է, որ փաստաբան Մկրտիչ Դավթյանն իր տղայի գործով պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել և իր չկատարած աշխատանքի համար իր աղջկանից գումար է պահանջում:

Դիմողը խնդրել է փաստաբան Մկրտիչ Դավթյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և ենթարկել կարգապահական պատասխանատվության:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը քննության առնելով քաղաքացի Հակոբ Մելիքյանի 29.07.2014թ. դիմումը՝

փաստաբան Մկրտիչ Դավթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին, 25.08.2014թ. թիվ 304-Ա/ԿԳ-14107 որոշմամբ փաստաբան Մ. Դավթյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի հատկանիշներով:

**3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

**3.1. Դիմողի համառոտ բացատրությունը**

Դիմողը 29.07.2014թ-ին դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին, որով ըստ էության հայտնել է, որ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից հետախուզման մեջ գտնվող իր որդին՝ Խաչիկ Հակոբի Մելիքյանը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 02.02.2013թ. ձերբակալվել է:

Դիմողը հայտնել է, որ Խաչիկ Մելիքյանին իրավական օգնություն ցույց տալու նպատակով վերջինիս քույրը՝ Կարինե Հակոբի Մելիքյանը, փաստաբան Մկրտիչ Դավթյանի հետ պայմանագիր է կնքել, որի օրինակը պատվիրատու հանդիսացող Կարինե Մկրտչյանին չի տրվել: Դիմողը նշել է, որ պարբերաբար փաստաբան Մկրտիչ Դավթյանին պայմանագրի հիման վրա վճարել է գումարներ (ընդհանուրը՝ 50.000 ՌԴ ռուբլի), սակայն փաստաբանը գումար ստանալու վերաբերյալ կտրոն չի տվել: Նա նշել է նաև, որ փաստաբան Մկրտիչ Դավթյանն ընդհանրապես չի զբաղվել նշված գործով, իր որդու իրավունքների պաշտպանության համար որևէ գործողություն չի կատարել, խաբել է Դիմողին՝ ասելով, որ դատական նիստեր են նշանակվել, իսկ Դիմողի հարազատները, փաստաբանի նշած օրը գնալով դատարան, պարզել են, որ որևէ նիստ նշանակված չէ: 04.03.2014թ. Դիմողը փաստաբան Մկրտիչ Դավթյանի կանչով եկել է Հայաստան՝ դատական նիստին մասնակցելու նպատակով, սակայն պարզվել է, որ իր որդու գործով որևէ նիստ չի նշանակվել, քանի որ գործը դեռևս գտնվում է քննչական բաժնում և որևէ առաջընթաց նշված գործով չկա: Դիմողը հայտնել է, որ փաստաբան Մկրտիչ Դավթյանը Դիմողի դստեր (պայմանագրով պատվիրատու) դեմ հայց է ներկայացրել՝ պայմանագրի հիման վրա 700.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, սակայն Դիմողը և իր դուստրը չգիտեն թե ինչ պայմանագիր են ստորագրել, քանի որ չունեն դրա օրինակը: Դիմողը խնդրել է փաստաբան Մկրտիչ Դավթյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում դիմողը բացատրություններ չի տվել և կարգապահական գործի քննությանը՝ Պալատի խորհրդի նիստին չի ներկայացել: 31.10.2014թ-ին դիմող ՝ Հակոբ Մելիքյանը դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին և խնդրել քննության չենթարկել իր նախկին դիմումը և այն թողնել անհետևանք, քանի որ գտնվել է

արտագնա աշխատանքի և իր որդու գործի ընթացքի մասին ոչ ոք իրեն չի տեղեկացրել և գործը երկարել է և դրա համար է փաստաբան ՝ Մ.Դավթյանի վերաբերյալ նման դիմում գրել:

**3.2.Պատասխանողի համառոտ բացատրությունը**

Պատասխանողի կողմից 04.09.2014թ-ին ներկայացվել է գրություն և դրան կից 65 թերթից բաղկացած հետևյալ փաստաթղթերը .

06.03.2013թ. քրեական գործով պաշտպան հանդես գալու մասին պայմանագիրը, որով փաստաբան Մկրտիչ Դավթյանը պարտավորվել է քրեական գործով ստանձնել և իրականացնել Կարինե Հակոբի Մելիքյանի եղբոր՝ Խ. Մելիքյանի պաշտպանությունը: Այդ կապակցությամբ Կարինե Մելիքյանի կողմից <<Մարդ և Օրենք>> ՍՊԸ-ի տնօրեն Մկրտիչ Դավթյանին ուղղված 06.03.2013թ. դիմումը,

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնի պետին ուղղված 11.04.2013թ. թիվ 0-41 գրությունը,

08.10.2013թ. ռուսերեն տրված լիազորագիրը և դրա թարգմանությունը, որով Խաչիկ Մելիքյանը լիազորել է փաստաբան Մկրտիչ Դավթյանին քրեական գործով իրականացնելու իր պաշտպանությունը,

28.10.2013թ. թիվ 7/6-6742 գրությունը, Խաչիկ Մելիքյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին 04.08.2012թ. որոշումը, փաստաբան Մկրտիչ Դավթյանի նախաքննական մարմնին ուղղված 21.10.2013թ. թիվ 85 դիմումը,

04.11.2013թ. թիվ 89 հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու մասին միջնորդությանը, 19.11.2013թ. թիվ 99 գրությունը, 29.11.2013թ. թիվ 109 գրությունը, նախաքննական մարմնի 25.12.2013թ. թիվ 7/6-8329 գրությունը,

25.12.2013թ. մեղադրյալ Խ. Մելիքյանի պաշտպան Մ. Դավթյանի միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը, այն պաշտպան Մ. Դավթյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին բողոքարկելու մասին 27.12.2013թ. դիմում-բողոքը, նախաքննական մարմնին ուղղված փաստաբան Մ. Դավթյանի 31.01.2014թ. թիվ 07 գրությունը, ՀՀ գլխավոր դատախազության 21.01.2014թ. թիվ 11-132-13 գրությանը,

ՀՀ Երևան քաղաքի դատախազության 24.01.2014թ. թիվ 50/80դ-14 գրությունը, պաշտպանի բողոքը մերժելու մասին 01.02.2014թ. որոշումը,

Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ուղղված փաստաբան Մ. Դավթյանի դիմում-բողոքին՝ քրեական գործի վարույթը կարճելու միջնորդությունը մերժելու մասին նախաքննական մարմնի

որոշման դեմ, թիվ ԵԱՔԴ/0011/11/14 գործով բողոքը քննության առնելու մասին դատարանի 04.03.2014թ. որոշումը,

քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննական մարմնի 11.07.2014թ. որոշումը, որով Խաչիկ Մելիքյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Պալատի խորհրդի նիստին պատասխանողը չներկայացավ :

**3.3.Վկաների ցուցմունքները.**

**Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:**

**4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին**

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Տիգրան Մուրադյանին: Վերջինս հավաքագրել է տվյալ գործին վերաբերող ապացույցները և ուսումնասիրել գործում առկա ապացույցները, որի արդյունքներով 2014թ-ի հոկտեմբեր 30-ին կազմել է եզրակացություն, որի համաձայն նա հաշվի առնելով Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 22-րդ հոդվածի դրույթները, գտել է, որ փաստաբան Մկրտիչ Դավթյանը թույլ չի տվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3 և 2.7.2 կետերի պահանջների խախտումներ:

Ներկայացված եզրակացության կապակցության կողմերը որևէ դիրքորոշում չեն հայտնել:

2014 թվականի նոյեմբերի 14-ին գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2014թվականի ապրիլի 20-ին, ժամը՝ 18:45-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

## 6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պատասխանող՝ Մկրտիչ Դավթյանը փաստաբանի թիվ 1186 արտոնագիրը ստացել է 15.10.2011թ.-ին: 2011-2014թթ. ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ և 10.02.2015թ-ին Պալատի խորհրդի որոշման համաձայն՝ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3. կետի հատկանիշով :

## 7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Խորհուրդը, ուսումնասիրելով վերը թվարկված փաստաթղթերը և գնահատելով գործում առկա ապացույցները, փաստում է , որ փաստաբան Մկրտիչ Դավթյանը բարեխիղճ իրավական օգնություն է ցույց տվել իր պաշտպանյալ Խաչատուր Մելքոնյանին, հանձնարարության պատշաճ կատարման համար ձեռնարկվել է այնպիսի անհրաժեշտ գործողություններ, որի արդյունքում իր պաշտպանյալի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: Փաստաբան Մկրտիչ Դավթյանը չի կատարել այնպիսի գործողություն, որը կարող էր կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը, բացասական ազդեցություն ունենալ փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման հարցում: Նա իր մասնագիտական կարողությունների սահմաններում իր վստահորդին ցույց է տվել բարեխիղճ իրավական օգնություն:Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մկրտիչ Դավթյանը թույլ չի տվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3 և 2.7.2 կետերի խախտումներ և նրա նկատմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման :

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ՝ Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ բացակայում է կարգապահական խախտման դեպքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8. հոդվածի 1-ին կետով և Պալատի փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Պալատի խորհուրդը

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

**1. ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Մկրտիչ Դավթյանի (արտոնագիր թիվ 1186) նկատմամբ Կանոնագրքի 2.2.2, 2.2.3 և 2.7.2 կետերի պահանջների խախտման հատկանիշներով վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:**

**2. Հանձնարարել Պալատի *աշխատակազմի ղեկավարին* `սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և Պատասխանողին:**

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան